ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐՄԻՆ (*sarx*)
SPECIAL TOPIC: FLESH (*sarx*)

Այս տերմինը հաճախ կիրառվում է Պողոսի կողմից Գաղատացիներում և դրա աստվածաբանական զարգացումները՝ Հռոմեացիներում: Գիտնականները չեն համաձայնվում այս տերմինի տարբեր լրացուցիչ նշանակությունների բնորոշման հարցում: Հաստատ այդ նշանակությունների մեջ գոյություն ունեն որոշակի ընդհանուր եզրեր: Այստեղ միայն փորձում եմ նշել այս տերմինի ընդարձակ իմաստաբանական տիրույթը:

Ա. Մարդու մարմինը, Հովհ.1:14; Հռոմ.2:28; 1 Կորն.5:5; 7:28; 2 Կորն.4:11; 7:5; 12:7; Գաղ.1:16; 2:16,20; 4:13; Փիլիպ.1:22; Կող.1:22,24; 2:5; 1 Տիմ.3:16
Բ. Մարդու սերունդը, Հովհ.3:6; Հռոմ.1:3; 4:1; 9:3,5,8; 11:14; 1 Կորթ.10:18; Գաղ.4:23,29
Գ. Մարդու անձը, Հռոմ.3:20; 7:5; 8:7-8; 1 Կորն.1:29; 2 Կորն.10:3; Գաղ.2:16; 5:24
Դ. Մարդկայնորեն խոսելը, Հովհ.8:15; 1 Կորն.1:26; 2 Կորն.1:12; 5:16; 10:2; Գաղ.6:12
Ե. Մարդկային թուլությունը, Հռոմ.6:19; 7:18; 8:5-6,9; 2 Կորն.10:4; Գաղ.3:3; 5:13,16,19-21; Կող.2:18
Զ. Աստծո հանդեպ մարդկանց թշնամությունը՝ կապված Անկման հետևանքների հետ, Հռոմ.7:14; 13:14; 1 Կորն.3:1,3; Եփես.2:3; Կող.2:18; 1 Պետ.2:11; 1 Հովհ.2:16:

Պետք է ընդգծել, որ «մարմին» տերմինը ՆԿ-ում չի դիտարկվում որպես չարիք, ինչպես հունական մտածելակերպն էր թելադրում: Հույն փիլիսոփաների համար «մարմինը» մարդկային խնդիրների աղբյուր էր. մահն ազատում էր մարդուն այդ ազդեցությունից: Սակայն ՆԿ-ում «մարմինը» հոգևոր բախման պատերազմի դաշտն է (տես՝ Եփես.6:10-18), մինչդեռ չեզոք է: Մարդը կարող է իր ֆիզիկական մարմինը գործածել թե՛ բարիքի և թե՛ չարիքի համար: